

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Նաիրա Զոհրաբյանի, Արմեն Աշոտյանի, Ավետ Ադոնցի և Վիկտոր Դալլաքյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

1-ին հոդվածում՝

1) երկրորդ պարբերությունում անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչ կարգով պետք է իրականացվի հրապարակային հաղորդումը.

2) հինգերորդ պարբերությունում հստակեցման կարիք ունի «Սույն օրենքի 31-րդ մասի դրույթները» հասկացությունը.

3) նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝

ա. 39-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները՝ անհրաժեշտ է նշել օրենքի ընդունման թիվը,

բ. 45-րդ հոդվածի յոթերորդ պարբերության պահանջները՝ անհրաժեշտ է «31» թիվը փոխարինել «3.1» թվով:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքի նախագիծն ընդունելի կհամարի իր կողմից ներկայացված առաջարկությունների ընդունման դեպքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս՝ հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Գևորգ Դանիելյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ

Պ-378-14.11.2008-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին

Հոդված 1. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի փետրվարի 20-ի օրենքի (այսուհետ՝ Օրենք) 112-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ «3¹»-րդ մասով՝

«3¹. Ազգային ժողովի միջոցների հաշվին, ինչպես նաև Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում, միջազգային կազմակերպություններում, միջխորհրդարանական հանձնաժողովներում եւ բարեկամության խմբերում ընդգրկված կամ այլ կերպ Ազգային ժողովի մարմինները ներկայացնելու նպատակով գործուղման մեկնած պատգամավորները կամ պատվիրակության ղեկավարները, հանդես են գալիս հրապարակային հաղորդմամբ:

Գործուղման ընթացքում իրենց կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը ներկայացվում է գործուղումից վերադառնալուց հետո առաջիկա ճեպագրույցի, ինչպես նաև պատգամավորի կամ պատվիրակության ղեկավարի առաջարկով հրավիրված մամուլի ասուլիսի ընթացքում:

Պատգամավորը կամ պատվիրակության ղեկավարը գործուղման արդյունքների վերաբերյալ իր գրավոր տեղեկանքը առնվազն տասնօրյա ժամկետում ի պահ է հանձնվում Ազգային ժողովի աշխատակազմում:

Սույն օրենքի 31-րդ մասի դրույթները չեն տարածվում Ազգային ժողովի նախագահի նկատմամբ: Ազգային ժողովի նախագահի պաշտոնական կամ աշխատանքային այցերի վերաբերյալ տեղեկատվությունը կազմում է հրապարակում է Ազգային ժողովի աշխատակազմը:

Հոդված 2. Օրենքի 113-րդ հոդվածի 5-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Օրենսդրական նախաձեռնությամբ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու նպատակն է՝

- § բարձրացնել Ազգային ժողովի հաշվետվողականության մակարդակը,
- § ապահովել հանրային իրազեկումն ու Ազգային ժողովի մարմինների գործունեության թափանցիկությունը,
- § նպաստել պետական քաղաքականության դրսևորմանը՝ կապակցվածության, հաջորդականության եւ միասնականության սկզբունքների հիման վրա:

Օրենքի նախագծի ընդունումը առավել կիրառելի կդարձնի Ազգային ժողովի հրապարակայնության սկզբունքը եւ առավել նպատակային ու արդյունավետ՝ ԱԺ մարմինների դերը եւ գործունեությունը: